ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2016 թվականի **թիվ 164** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի «2017 թվականի համար Եվրասիական տնտեսական միության միջազգային գործունեության հիմնական ուղղությունների մասին» որոշման նախագծի վերաբերյալ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Հավանություն տալ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի «2017 թվականի համար Եվրասիական տնտեսական միության միջազգային գործունեության հիմնական ուղղությունների մասին» որոշման նախագծին (կցվում է) եւ այն ներկայացնել Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի քննարկմանը:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Ա. Մամին	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

« » -ի 20 թվականի **թիվ** քաղ.

2017 թվականի համար Եվրասիական տնտեսական միության միջազգային գործունեության հիմնական ուղղությունների մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հոդվածին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 99 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության կողմից միջազգային համագործակցություն իրականացնելու կարգի 5-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացված՝ 2017 թվականի համար Եվրասիական տնտեսական միության միջազգային գործունեության հիմնական ուղղությունները:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
բարձրագույն խորհրդի20 թվականի
թիվ որոշմամբ

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2017 թվականի համար Եվրասիական տնտեսական միության միջազգային գործունեության

I. Եվրասիական տնտեսական միության միջազգային գործունեության վերաբերյալ հիմնական դրույթները

Սույն հիմնական ուղղությունները մշակված են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 99 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության կողմից միջազգային համագործակցություն իրականացնելու կարգի 5-րդ կետին համապատասխան՝ հաշվի առնելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 4-րդ հոդվածում նշված՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) նպատակները, եւ կոչված են նպաստելու Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) տնտեսական աճին, տնտեսությունների բազմազանեցմանը, արտահանման ներուժի ավելացմանն ու իրագործմանը, Միության՝ որպես միջազգային ասպարեզում վստահելի, կանխատեսելի գործընկերոջ դիրքավորմանը:

Միության միջազգային գործունեությունն իրականացվում է նշված Պայմանագրով եւ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով սահմանված՝ իրավասությունների սահմաններում եւ ոլորտներում:

II. 2017 թվականի համար միջազգային գործունեության ուղղությունները

Միության կողմից միջազգային գործունեություն իրականացնելիս 2017 թվականին առաջնահերթ են համարվում հետեւյալ ուղղությունները՝

փոխգործակցություն տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումների, միջազգային կազմակերպությունների, երրորդ պետությունների կառավարությունների եւ գործարար համայնքների հետ՝ համագործակցության հնարավոր ձեւերը եւ կոնկրետ ուղղությունները բացահայտելու, Միության մասին դրական պատկերացում ձեւավորելու, միջազգային տարբեր հարթակներում Միության շնորհանդեսների եւ համատեղ մասնագիտական միջոցառումների անցկացման նպատակներով.

փոխգործակցություն Միության հետ համագործակցությամբ հետաքրքրված տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումների, միջազգային կազմակերպությունների, երրորդ պետությունների կառավարությունների եւ գործարար համայնքների հետ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) պաշտոնական ներկայացուցիչների կողմից նրանց հետ բանակցությունների անցկացման, միջազգային պայմանագրերի կնքման, այդ թվում՝ առեւտրատնտեսական համագործակցության եւ ազատ առեւտրի գոտիների ձեւավորման մասին, փոխըմբռնման հուշագրերի կազմման եւ ստորագրման, ինչպես նաեւ նախկինում ստորագրված հուշագրերի շրջանակներում աշխատանքի ապահովման նպատակներով.

փոխգործակցություն Միության առեւտրատնտեսական գործընկերների հետ՝ առեւտրի ու ներդրումների ծավալների մեծացմանը եւ կառուցվածքի բարելավմանը, ինտեգրացիոն գործընթացների առաջխաղացմանը, անդամ պետությունների նորարարական զարգացմանը, ինչպես նաեւ միջազգային մասշտաբով Միության՝ որպես արդյունավետ ու մրցունակ կազմակերպության հետագա զարգացմանը նպաստելու նպատակներով:

2017 թվականին Միության եւ դրա անդամ պետությունների միջազգային գործունեության բնագավառում հիմնական ջանքերը կենտրոնացված կլինեն փոխգործակցության զարգացման վրա՝

Միության անդամ չհանդիսացող՝ *Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) մասնակից պետությունների հետ*, ԱՊՀ գործադիր կոմիտեի հետ՝ դրա իրավասության սահմաններում գտնվող հարցերի առնչությամբ, ինչպես նաեւ Միութենական պետության մշտական կոմիտեի հետ.

եվրոպական պետությունների, Եվրոպական միության, Եվրոպայում տարածաշրջանային ինտեգրացիոն այլ միավորումների եւ եվրոպական տարածաշրջանում գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ՝ ներառյալ Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունը, Կենտրոնաեվրոպական նախաձեռնությունը, Սեւծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը, Ազատ առեւտրի եվրոպական ասոցիացիան եւ այլն: Եվրոպական ուղղության վրա միջազգային գործունեության կառուցումը կիրականացվի՝ հաշվի առնելով եվրոպական պետությունների կառավարությունների, բիզնես համայնքների ու գիտական շրջանակների հետաքրքրությունը Միության հետ համագործակցության հանդեպ, ինչպես նաեւ հաշվի առնելով դրանց՝ Միության եւ Եվրոպական միության փոխգործակցությանը նվիրված միջոցառումների կազմակերպմանն ուղղված նախաձեռնությունը: Կշարունակվի Հանձնաժողովի՝ Եվրոպական հանձնաժողովի հետ ուղղակի կապերի հաստատման մասով աշխատանքը: Համապատասխան հրահանգների հաստատումից հետո կշարունակվի Միության եւ դրա անդամ պետությունների հետ առեւտրային ռեժիմի միասնականացման վերաբերյալ Սերբիայի Հանրապետության հետ բանակցություններ անցկացնելու մասով աշխատանքը.

Հյուսիսային Ամերիկայի պետությունների, տվյալ տարածաշրջանի ինտեգրացիոն միավորումների եւ գործարար համայնքների հետ, առաջին հերթին Ամերիկայի Միացյալ Նահանգների, Կանադայի, Մեքսիկայի Միացյալ Նահանգների, ինչպես նաեւ Հյուսիսամերիկյան ազատ առեւտրի ասոցիացիայի (ՆԱՖԹԱ) հետ.

Ասիայի պետությունների եւ Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ինտեգրացիոն միավորումների հետ, այդ թվում՝

Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ), Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնտեսական համագործակցության հետ.

«Ասիական-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցություն» (ԱԽՏՀ) ֆորումին մասնակից տնտեսությունների հետ.

Հարավ-արեւելյան Ասիայի պետությունների ասոցիացիայի (ՀԱԱՊԱ) հետ, այդ թվում՝ ՀԱԱՊԱ-ի եւ ՀԱԱՊԱ-ի անդամ պետությունների հետ փոխգործակցության մասին հուշագրի նախապատրաստման եւ ստորագրման մասով.

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ (ՉԺՀ), այդ թվում՝ առեւտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիր կնքելու, Միության եւ ՉԺՀ-ի մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների եւ միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվություն փոխանակելու մասին համաձայնագիր կնքելու մասով, ինչպես նաեւ Միության եւ Մետաքսե ճանապարհի տնտեսական գոտու փոխկապակցման հարցերով.

Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության հետ, այդ թվում՝ «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի իրագործման մասով.

Հնդկաստանի Հանրապետության հետ՝ ազատ առեւտրի վերաբերյալ համաձայնագիր կնքելու նպատակահարմարության մասին հարցի ուսումնասիրության հարցերով համատեղ հետազոտական խմբի աշխատանքների արդյունքների հիման վրա.

Իրանի Իսլամական Հանրապետության հետ՝ ազատ առեւտրի վերաբերյալ համաձայնագիր կնքելու նպատակահարմարության մասին հարցի ուսումնասիրության հարցերով համատեղ հետազոտական խմբի աշխատանքների ավարտման եւ այդպիսի համաձայնագիր կնքելու կապակցությամբ բանակցությունների անցկացման շրջանակներում.

Սինգապուրի Հանրապետության հետ՝ ազատ առեւտրի վերաբերյալ համաձայնագիր կնքելու նպատակահարմարության մասին հարցի ուսումնասիրության հարցերով համատեղ հետազոտական խմբի եւ այդպիսի համաձայնագիր կնքելու կապակցությամբ բանակցությունների անցկացման շրջանակներում՝ Միության մարմինների համապատասխան որոշումներ ընդունվելու դեպքում.

Ասիայում առեւտրատնտեսական գործընկերների եւ Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ֆինանսական ակտիվության խոշոր կենտրոնների հետ՝ ներառյալ Բանգլադեշի Ժողովրդական Հանրապետությունը, Ինդոնեզիայի Հանրապետությունը, Կորեայի Հանրապետությունը, Մալայզիան, Հոնկոնգ հատուկ վարչական շրջանը, Թաիլանդի Թագավորությունը, Ճապոնիան եւ այլն: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Մոնղոլիայի, Սինգապուրի Հանրապետության, Կամբոջայի Թագավորության կառավարությունների միջեւ փոխըմբռնման եւ համագործակցության հուշագրերի շրջանակներում կշարունակվի փոխգործակցության, ինչպես նաեւ տվյալ տարածաշրջանի այլ պետությունների հետ փոխըմբռնման հուշագրեր ստորագրելու միջոցով փոխշահավետ համագործակցության ձեւայնացման հեռանկարների քննարկման աշխատանքը.

Լատինական Ամերիկայի պետությունների եւ Լատինական Ամերիկայի ինտեգրացիոն միավորումների հետ, այդ թվում՝

Արգենտինայի Հանրապետության, Բրազիլիայի Դաշնային Հանրապետության, Վենեսուելայի Բոլիվարյան Հանրապետության, Գայանայի Կոոպերատիվ Հանրապետության, Կոլումբիայի Հանրապետության, Ուրուգվայի

Արեւելյան Հանրապետության հետ եւ այլն: Կշարունակվի աշխատանքը Հարավամերիկյան ընդհանուր շուկայի (ՄԵՐԿՈՍՈՒՐ) եւ Անդյան համայնքի հետ, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ նշված ինտեգրացիոն միավորումների միջեւ փոխըմբռնման հուշագրեր ստորագրելու մասով: Կշարունակվի աշխատանքը Խաղաղօվկիանոսյան դաշինքի, Կարիբյան համայնքի (ԿԱՐԻԿՈՄ), Ինտեգրման լատինամերիկյան ասոցիացիայի (ԻԼԱ) հետ փոխգործակցության կարգավորման մասով: Հանձնաժողովի եւ Չիլիի Հանրապետության ու Պերուի Հանրապետության կառավարությունների միջեւ փոխըմբռնման հուշագրերի շրջանակներում կշարունակվի հետագա փոխգործակցության, ինչպես նաեւ տվյալ տարածաշրջանի այլ պետությունների հետ փոխըմբռնման հուշագրեր ստորագրելու միջոցով փոխշահավետ համագործակցության ձեւայնացման հեռանկարների քննարկման աշխատանքը.

Մերձավոր Արեւելքի եւ Աֆրիկայի ու այդ տարածաշրջանների ինտեգրացիոն միավորումների հետ, այդ թվում՝

կշարունակվի Միության եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջեւ հարաբերությունների բարելավմանն ուղղված աշխատանքը, ինչպես նաեւ բանակցություններ կանցկացվեն Իսրայելի Պետության հետ՝ ազատ առեւտրի գոտու մասին համաձայնագիր կնքելու վերաբերյալ.

կշարունակվի Քենիայի Հանրապետության, Նիգերիայի Դաշնային Հանրապետության, Հարավաֆրիկյան Հանրապետության, Եթովպիայի Դաշնային Ժողովրդավարական Հանրապետության հետ փոխգործակցության կարգավորման հարցի ուսումնասիրումը: Սիրիայի Արաբական Հանրապետությունում Միության առեւտրատնտեսական շահերի առաջխաղացումը կախված կլինի տվյալ պետությունում իրավիճակի կայունացումից.

կշարունակվի Աֆրիկյան միության, Արեւելաաֆրիկյան համայնքի, Հարավաֆրիկյան մաքսային միության, Աֆրիկայի հարավի զարգացման համայնքի (ՍԱԴԿ) հետ փոխգործակցության կարգավորման հարցի ուսումնասիրումը:

Երրորդ երկրների նկատմամբ Հանձնաժողովի՝ հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման իրավասության իրագործման շրջանակներում կշարունակվի փոխգործակցության իրականացումը երրորդ երկրների ներկայացուցիչների հետ (ներառյալ հանդիպումները եւ խորհրդատվությունները, այդ թվում՝ երրորդ երկրների տարածքում), ինչպես նաեւ՝ փոխգործակցությունը երրորդ երկրների, միջազգային ինտեգրացիոն միավորումների եւ միջազգային կազմակերպությունների հետ ներքին շուկայի պաշտպանության միջոցների կիրառման հարցերով:

Կզարգանա բազմակողմ համագործակցությունը *միջազգային կազմակերպությունների* հետ, այդ թվում՝

Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) եւ ՄԱԿ–ի հատուկ կառույցների (ՄԱԿ-ի առեւտրի եւ զարգացման համաժողովի (ՄԱԿ ԱԶՀ), ՄԱԿ-ի առեւտրի եւ զարգացման համաժողովի (ՄԱԿ ԱԶՀ)՝ մրցակցության ոլորտում օրենսդրության եւ քաղաքականության հարցերով փորձագետների միջկառավարական խմբի, Միավորված ազգերի կազմակերպության առեւտրի ընթացակարգերի եւ էլեկտրոնային բիզնես գործառնությունների պարզեցման կենտրոնի (ՄԱԿ ԱԷՊԿ), Միավորված ազգերի կազմակերպության արդյունաբերական զարգացման կազմակերպության (ՄԱԿ ԱԶԿ), Արժույթի միջազգային հիմնադրամի, Վիճակագրական հանձնաժողովի, Միջազգային առեւտրային իրավունքի հանձնաժողովի (ՅՈՒՆՍԻՏՐԱԼ) (ներառյալ մասնակցությունը էլեկտրոնային առեւտրի եւ միկրո, փոքր ու միջին ձեռնարկությունների գծով աշխատանքային խմբերի նիստերին), Միավորված ազգերի կազմակերպության պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության (ՖԱՕ), Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ), Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ), ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ), ինչպես նաեւ ՄԱԿ–ի տնտեսական եւ սոցիալական խորհրդի տարածաշրջանային կազմակերպությունների (ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ ԵՏՀ), Ասիայի եւ Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական եւ սոցիալական հարցերի հանձնաժողովի (ԱԽՏԱՀ) եւ այլն) հետ.

ուրիշ միջազգային կազմակերպությունների (այդ թվում՝ տարածաշրջանային), միությունների հետ եւ այլն, դրանց ճյուղային մարմինների եւ հիմնարկների հետ (Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ), ԲՐԻԿՍ երկրների, Համաշխարհային բանկի, Համաշխարհային մաքսային կազմակերպության, Կենդանիների առողջապահության համաշխարհային կազմակերպության, Համաշխարհային փոստային միության, Միջպետական ավիացիոն կոմիտեի, Միգրացիայի միջազգային կազմակերպության, Ավտոմոբիլային տրանսպորտի միջազգային միության, Երկաթուղիների համագործակցության կազմակերպության, Երկաթուղիների միջազգային միության (ԵՌԻՄՄ), Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ), Միջազգային տրանսպորտային ֆորումի, Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի, Ստանդարտացման միջազգային կազմակերպության, Էլեկտրակապի միջազգային միության, Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովի, Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության, Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կոմիտեի (ՖՀՄՄԿ), Աուդիտի եւ տեղեկատվության արժանահավատության հաստատման միջազգային ստանդարտների կոմիտեի, Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական եւ բուսական աշխարհի տեսակների միջազգային առեւտրի մասին կոնվենցիայի, Հավատագրման միջազգային ֆորումի, Կիրառական համակարգային վերլուծության միջազգային ինստիտուտի, Լաբորատորիաների հավատարմագրման միջազգային կազմակերպության, Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության, Բժշկական արտադրատեսակների հարցերով զբաղվող կարգավորող մարմինների միջազգային ֆորումի, Ցուլերի տոհմային արժեքի գնահատման միջազգային կազմակերպության, Կենդանիների գենետիկայի հարցերով զբաղվող միջազգային ընկերությունների, Մարդկանց համար դեղամիջոցների գրանցման տեխնիկական պահանջների ներդաշնակեցման միջազգային համաժողովի, Գյուղատնտեսական կենդանիների հատկանիշների

հաշվառման եւ գրանցման միջազգային կոմիտեի, Ցորենի հարցերով միջազգային խորհրդի, Բույսերի նոր սորտերի պաշտպանության միջազգային միության, Ապրանքային նշանների միջազգային ասոցիացիայի, Էներգետիկայի հարցերով համաշխարհային խորհրդի, Էներգիայի վերականգնվող աղբյուրների միջազգային գործակալության (IRENA), Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ), Գազ արտահանող երկրների ֆորումի (ԳԱԵՖ), Նավթ արտահանող երկրների կազմակերպության (ՆԱԵԿ), Գազի համաշխարհային միության եւ Եվրոպայի ու Ասիայի էներգետիկ բորսաների, Էներգետիկայի ոլորտը կարգավորողների փոխգործակցության գործակալության, Մրցակցային օրենսդրության եւ քաղաքականության հարցերով փորձագետների միջկառավարական խմբի, Մրցակցության միջազգային ցանցի, Կոդեքս Ալիմենտարիուս հանձնաժողովի, Բույսերի կարանտինի եւ պաշտպանության միջազգային կոնվենցիայի քարտուղարության, Հարկերի եւ ներդրումների միջազգային կենտրոնի, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ), Եվրասիական արտոնագրային կազմակերպության (ԵԱԱԿ), Եվրոպական միության՝ մտավոր սեփականության գերատեսչության (EUIPO), Բանկային վերահսկողության գծով Բազելի կոմիտեի, Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրների բանկային ասոցիացիայի, Եվրոպական կենտրոնական բանկի, Ստանդարտացման եվրոպական կոմիտեի, Էլեկտրատեխնիկայի ստանդարտացման եվրոպական կոմիտեի, Հավատարմագրման հարցերով եվրոպական համագործակցության գլխավոր ասամբլեայի, Եվրոպական դեղագրքի հանձնաժողովի, Դեղամիջոցների եվրոպական գործակալության, Ցուլերի տոհմային արժեքի գնահատման կազմակերպությունների եվրոպական ասոցիացիայի, Էներգետիկական եվրոպական համայնքի, Էլեկտրահաղորդիչ ցանցերի օպերատորների եվրոպական համայնքի, Գազատրանսպորտային ցանցերի օպերատորների եվրոպական համայնքի, Էներգետիկայի կարգավորիչների եվրոպական խորհրդի, Շրջակա միջավայրի եւ էներգետիկայի կարգավորման հարցերով գործակալության, Հարկային վարչակազմերի միջեվրոպական կազմակերպության,

Հարկային խորհրդատուների եվրոպական կոնֆեդերացիայի, Եվրոստատի, Եվրոպական միության՝ բույսերի առողջության հարցերով մշտական կոմիտեի, Բույսերի կարանտինի եւ պաշտպանության եվրոպական ու միջերկրածովային կազմակերպության, Պետական չափագիտական հիմնարկների եվրասիական համագործակցության, Որակի ասիական կազմակերպության, Իսլամական երկրների ստանդարտների եւ չափագրման ինստիտուտի, Բույսերի կարանտինի եւ պաշտպանության հարցերով ասիական ու խաղաղօվկիանոսյան հանձնաժողովի, Լաբորատորիաների հավատարմագրման ասիական ու խաղաղօվկիանոսյան կազմակերպության, Կապի տարածաշրջանային համագործակցության, Կապի տարածաշրջանային համագործակցության տեղեկատվայնացման հարցերով ԱՊՀ մասնակից պետությունների համակարգող խորհրդի (ԿՏՀ), ԱՊՀ մասնակից պետությունների բույսերի կարանտինի համակարգող խորհրդի, Հանցավոր եկամուտների օրինականացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի եվրասիական խմբի, Էներգետիկայի կարգավորման մարմինների տարածաշրջանային ասոցիացիայի հետ եւ այլն).

ԱՀԿ-ի հետ, այդ թվում՝ ԱՀԿ մասնագիտացված կոմիտեների շրջանակներում, ԱՀԿ ծառայությունների առեւտրի խորհրդի, ներքին կարգավորման աշխատանքային խմբի շրջանակներում, ինչպես նաեւ Միության ներքին շուկայի պաշտպանության միջոցների առնչությամբ գործերի շրջանակներում Վեճերի կարգավորման մարմնի (ՎԿՄ) հետ.

Քիմբերլյան գործընթացի շրջանակներում ղեկավար եւ աշխատանքային մարմինների հետ:

Կշարունակվի փոխգործակցությունը *միջազգային գործարար եւ փորձագիտական համայնքների*, այդ թվում՝ Համաշխարհային տնտեսական ֆորումի, առեւտրաարդյունաբերկական պալատների, գործարար համագործակցության խորհուրդների, զարգացման տարածաշրջանային բանկերի, «Տնտեսական ինտեգրում զարգացող երկրներում՝ մարտահրավերներ եւ

հնարավորություններ» համաժողովի, Լատինական Ամերիկայի երկրների համար համաշխարհային տնտեսական ֆորումի, Ցորենի հարցերով միջազգային խորհրդի համաժողովի, Գյուղատնտեսական եւ սննդի արդյունաբերության միջազգային ցուցահանդեսի, ԱՊՀ մասնակից պետությունների միգրացիայի մարմինների ղեկավարների խորհրդի, ԱՊՀ մասնակից պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (ՀՔՄԽ), ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի, Համաշխարհային արտադրողների ֆորումի, «Մրցակցության համաշխարհային ակնարկ» հրատարակության, Հարկերի եւ ներդրումների միջազգային կենտրոնի հետ, ինչպես նաեւ մասնակցությունն այլ ճյուղային ցուցահանդեսներում, ֆորումներում, համաժողովներում, այդ թվում՝ տրանսպորտի, ավիացիայի, մետաղամշակման, հաստոցաշինության, գյուղատնտեսության եւ գյուղատնտեսական մեքենաշինության, մետալուրգիայի, տեղեկատվական անվտանգության, պետական գնումների, մրցակցության եւ հակամենաշնորհային կարգավորման ոլորտներում՝ տնտեսության առանձին հատվածների զարգացման համաշխարհային առաջատար փորձն ուսումնասիրելու նպատակներով:

Գլոբալ համատեքստում եվրասիական տնտեսական ինտեգրման զարգացման արդիական հարցերը, ինչպես նաեւ Միության միջազգային գործունեության հարցերը 2017 թվականին կգտնվեն Պետերբուրգի միջազգային տնտեսական ֆորումի, Աստանայի տնտեսական ֆորումի, «ԷՔՍՊՈ-2017» Միջազգային մասնագիտացված ցուցահանդեսի, «Եվրասիական շաբաթ» ցուցահանդեսային ֆորումի, ինչպես նաեւ անդամ պետությունների տարածքներում անցկացվող՝ միջազգային մակարդակի նմանատիպ այլ միջոցառումների ուշադրության կիզակետում: